

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱԶ Մանվել Մաթևոսյան Վահանի-ն ԱՄՄՀ-ԷԱՃԱՊԶԲ-24/63 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	Մանվել Մաթևոսյան Վահանի ԱԶ	<p>Ղեկավարի գրասեղան՝ պատրաստված ամբողջովին երկշերտ 18մմ հաստությամբ լամինատից, եզրերը պատված կլինեն 3,6սմ հաստությամբ ՄՃՓ-ի պրոֆիլներով: Սեղանի երկարությունը 170 սմ, լայնքը՝ 80սմ, բարձրությունը՝ 70սմ: Գրասեղանի դիմային հատվածը ամբողջովին կլինի փակ: Գրասեղանը կունենա երկու կախովի կամ ամրացված շարժական դարակներ, դարկներից յուրաքանչյուրի արտաքին չափը՝ լայնությունը՝ 38սմ, բարձրությունը՝ 15սմ: Գրասեղանի հավաքածուն ներառում է նաև կողադիր և գրապահարան: Կողադիրի չափսերը՝ Ե80*բ60*խ40*սմ, 18մմ հաստությամբ լամինատից պատրաստված (վրադիր հատվածը՝ երկշերտ, եզրերը պատված կլինեն 3.6սմ հաստությամբ ՄՃՓ-ի պրոֆիլներով) բաժանված երկու մասի՝ ձախ կողմից մեկ դուռ (արտաքին չափերը՝ 134*բ50սմ), ներսի հատվածը բաժանված հավասար երկու հատվածների, իսկ աջ կողմում 2 դարակաշար (արտաքին չափերը՝ 139*բ26սմ): Դարակների ուղղորդիչները՝ պարտադիր կլինեն բարդ գնդիկավոր-վակումային տեսակի, դռների ծխնիները՝ վակումային բարդ մեխանիզմներով: Հավաքածուն ներառում է նաև գրապահարան, պատրաստված 18մմ հաստությամբ լամինատից, չափերը՝ Բ200սմ*170սմ*խ40սմ: Գրապահարանը բաղկացած է երկու հավասարաչափ մասերից /յուրաքանչյուրը 85սմ/, աջ կողմը՝ լամինատե 2 դռներով, որի մի հատվածը նախատեսված</p>

կլինի հագուստի համար՝ համապատասխան կախիչներով, իսկ մյուս հատվածը՝ ամնվազն 4 դարակաշարերով: Ձախ կողմի վերնամասը՝ ապակյա պրոֆիլապատ երկու դռներով, 2 լամինատե դարակաշարերով, իսկ ստորին հատվածը՝ լամինատե երկու փոքր դռնակներով, լամինատե դարակաշարերով: Պահարանի եզրամասերը պատված կլինեն պոլիվինիլքլորիդային թերմոպլաստե եզրաշերտերով, դռների ծխնիները՝ վակուումային բարդ մեխանիզմներով: Բոլոր դռները կունենան որակյալ և ամուր բռնակներ: Ապրանքի տեսքը կհամապատասխանի հրավերով ներկայացված նմուշին կամ կբավարարի տեխնիկական բնութագրով ներկայացված պահանջներին: Ապրանքի պատրաստման համար օգտագործվող նյութերը կլինեն նոր (չօգտագործված): Հավաքածուի գույնը կլինի wenge wood իսկ տեսքը կհամապատասխանի հրավերով ներկայացված նկարներին (առանց դիմադիրի): Անհրաժեշտության դեպքում նմուշին կծանոթանանք ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4 հասցեում, Մասիսի համայնապետարանի վարչական շենքում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ԱԶ Մանվել Մաթևոսյանի Կառավարությունը որպես մասնակցի մասնակցություն է ցուցաբերում մասնակցություն էլեկտրոնային աուկցիոնում կոդով ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/63 ներքև ներկայացված է լրիվ նկարագրությունը առաջարկվող առարկայի:

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
2		